

Բ. Զանազան պետութեանց յեղափոխութիւններու բոլոր շրջաններուն, այս ազգը միշտ խաղաղարարոյ ընթացք մը ունեցած է՝ համբերատարութեամբ կրելով ժամանակին բոլոր տառապանքները: (Իբրեւ փաստաթուղթ կը յիշէ Naigebauer, հատոր Ա., էջ 83):

Գ. Սոյն իշխանապետութեան մէջ հայոց զբաղումը երկրին օգտակար նկատուած է, անոնք ծաղկեցուցած ըլլալով առեւտուրն ու երկրագործութիւնը, եւ մեծապէս օժանդակած՝ երկրին բոլոր կարիքներուն, ինչ որ կ'ապացուցանեն հին հրովարտակները, որոնցմով անոնք հրաւիրուած են այնպիսի նպաստաւոր առանձնաշնորհումներու խոստումով՝ որպիսին չեն ունեցած նոյնիսկ Մոլոտովէները: (Իբրեւ փաստ ցոյց կը տրուի, առեւտուրի մասին՝ Naigebauer հատոր Բ., էջ 6-1, 231-246, հողագործութեան մասին՝ Naigebauer հատոր Բ., էջ 242. առհասարակ առեւտուրի, երկրագործութեան եւ արջառաքուծութեան մասին՝ հրովարտակները զորս յետոյ պիտի յիշենք. երկրին կարիքներուն անոնց բերած աջակցութեան մասին Հէկուլի հրովարտակը եւ Կրիկօրօփիչի փաստաթուղթը՝ տրուած Իօան Սանտու Սթուրգա իշխանին կողմէ, որ կը հաստատէ թէ Արքսենտ Հէուլ բացի պետութեան մատուցած ծառայութիւններէն՝ պատեհաբար ատեն զանձին օգնած է զբամապէս եւ զերծ կացուցուած է որեւէ տուրքէ յորդոց որդի):

Դ. Հայերը 1785-էն առաջ կը վայելէին Մոլոտովէներուն համահաւասար քաղաքային եւ քաղաքական իրաւունքներ, թէ՛ հայերը նոյնիսկ երկրին դահերը գրաւեցին, այդ առթիւ ձգելով բարեգործական բազմաթիւ յիշատակարաններ: (Տեսնել 1852-ին Նաչի մէջ հրատարակուած Litopisitele գիրքը, ուր ցոյց կը տրուի թէ երկրին դահերուն վրայ նրստած են քանի մը հայեր):

Ե. 1785-ի դժբախտութենէն յետոյ հայերը զրկուած ըլլալով հանդերձ քաղաքայիններու վայելած հայրենակցական իրաւունքներէն, այնուամենայնիւ երկրին հանդէպ ցոյց տուին անվերապահ հաւատարմութիւն մը, մասնաւորաբար զարգացուցին իրենց գործնական ճարտարարուեստը, հարստացուցին առեւ-

տուրը, եւ կատարելութեան հասցուցին հողագործութիւնը, հաստատելով նմանապէս բազմաթիւ կրթական հաստատութիւններ մշակոյթի համար, որպէսզի կարենան պատրաստուիլ երկրին ի նպաստ ամէն աշխատանքի: (Տեսնել ի մասին անոնց հաւատարմութեան՝

Naigebauer հատոր Ա., էջ 83, ճարտարարուեստի մասին՝ Academia Comerciilor, 1797, հատոր Ա., էջ 976. առեւտուրի եւ հողագործութեան մասին՝ հրովարտակներ. ուսման նպատակով երկրին, Մոսկուայի, Բատուայի, Կալկաթայի, Պոմպէյի, Եւայի, Դըպրոցները ուսանող զրկելու մասին՝ Naigebauer հատոր Բ., էջ 223-224-368. անոնց կրթական դերին մասին՝ Նաչի մէջ 1853-ին հրատարակուած Հայ Փաստաթուղթերու Հաւաքածոն, էջ 53-54 եւ Մասեաց Աղաւնի, 1858, Փաղիդ, թիւ 6, էջ 121-124):

Զ. Այդքան համբերատարութենէ եւ տառապանքի այդքան տարիներէ յետոյ, հայ ազգը կը հաւատայ այսօր որ բնութեան օրէնքով ալ եւ բարոյապէս ալ արդարեւ ամբողջապէս ընտանեցած է Մոլոտովէներուն քաղաքական իրաւունքներուն, այնպէս որ նոյնիսկ պետութեան շահը կը պահանջէ հայերուն շնորհիւ բոլոր առանձնաշնորհումները որպէսզի այդ կերպով զօրացնէ իր բարոյական ազդեցութիւնը, վարձատրելով ազգ մը, որ միշտ բաժնած է բոլոր ծանրութիւնները, զօրացնէ նոյնպէս իր իսկ նիւթական շահը՝ արտօնելով հայերը դնելու կալուածներ, մշտական սեփականութիւններ, որպէսզի այդ կերպով յաւիտենապէս կապուած ըլլան անոնք հայրենիքին. Մոլոտովա, նոյնպէս, պիտի շահի քաղաքականապէս ալ, հայերը պետական պաշտօններու կոչելով, որովհետեւ կոռուարութեան հանդէպ հաւատարմութեան միակ կապով մը կապուած ժողովուրդին բազմաալովը՝ կ'աճի պիտանի մարդոց թիւը:

(Տեսնել՝ Բագմալէպ, 1843, Վենետիկ, 349-352 եւ Leginirile Obslestei Adunari din Valahia:

Է. Այս ազգին բարձրացումը պահանջող գործօն բոլոր իրաւունքներուն կողքին՝ մեր ամենէն բուն յոյսը դրուած է դաշնակից պետութեանց օգնութեանը վրայ, որոնք ճանչնա-